№ 136 ԿԻՐԱԿԻ ՕՐԻՆԻՍԻ 24 — 1901 — ԿԻՐԱԿԻ ՕՐԻՆԻՍԻ 24 № 136

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Մատենագրութիւն. Նամակ Շուշուց. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ծերուկը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՑ ԶՐՈՅՑ

—

Շոք է... Ըէօմիւրի մնդիկը առ այժմ անշարժացած է 23°-ի վրա։ Սա սենեակում. իսկ ինչ է կատարվում դրսում։ Թիֆլիսի 150 հազար ազգաբնակութեան վրա բռնացած է մի անողորմ արեգակ։ Նա տրամադրում է ձեզ կարծել, թէ ամեն ինչ այրվում, փոթրթվում է. նայում էք փողոցով անցնող մարդկանց եւ զարմանում էք—ինչպէս է որ նրանցից ծուխ չէ բարձրանում, ինչպէս է որ նրանք չեն հրդեհվում։

Եւ այսպէս է դեռ յունիսը, մի անուն, որ համեմատաբար մեղմ է հնչում տաքից տապակվողների ականջին։ Դեռ առջեւներումս ունենք երկու անգութ անուններ—յուլիս, օգոստոս։ Ամբողջ երկու ամիս... Որքան առաջ ենք գնում, այնքան վատ։

Իսկ գիտէք, ընթերցող, այս բոցեղէն արեւի տակ որքան «հմայքներ» ունի տարածած մեր Թիֆլիսը, կովկասեան այս մայրաքաղաքը։ Դրանց, այդ «հմայքները» միայն նկարագրել է հարկաւոր։ Բայց ուր են նկարագրողները, ուր են վշտեր երգող բանաստեղծները։

Միայն մեր փոշին որքան հեծեծանքներ կարող էր հանել տալ հասարակական հարցերով ոգեւորվող բանաստեղծին։ Չը կան, սակայն, այդպիսի բանաստեղծներ։ Մի ժամանակ—սա վաղուցվայ բան է—բանաստեղծը պատիւ էր համարում իրան անուանել «խալխի նօքար»։ Իսկ այժմ։—Պարնասականները սարսափելի եւ սապաշտներ են դարձել։ Կը նստէ «Մուսայի սիրելին» իր համար, կը թաթախէ գրիչը թանաքի մէջ եւ կը սկսէ երգել. էլ թէ ինչ ծովեր ու ովկիանոսներ կան իր մէջ, էլ թէ ինչպէս են ալեկոծվում այդ ծովերն ու ովկիանոսները, ինչպէս են մրրիկները բարձրանում իր հոգու մէջ, տանում են երկինք, տանում են դժոխք, դէս ու դէն են գցում, խորտակում են, այրում, կրակում, պայթում, ցրիւ գալիս, էլի հաւաքվում։

Այդպիսի եսամոլ քնարահարները, ի հարկէ, չեն նկարագրի մեր ահագին հասարակութեան շուարումը, անճարութիւնը։ Հազարաւոր, բիւրաւոր բերաններ օդ չեն գտնում՝ ծծելու համար եւ յուսահատ բացականչում են. «Ո՞ւր գնալ, ինչ անել»։ Խեղճեր։ Նրանք կը կամենային գէթ մի ժամ հանգստանալ, թարմ օդ ծծել, հովանալ։ Բայց...

Ես կարդացել եմ Թիֆլիսի շատ նկարագրութիւններ։ Եկել են մեզ մօտ շատ ճանապարհորդներ, գրել են շատ բան մեր մասին։ Եւ չեմ յիշում, որ դրանցից մէկը վատ խօսած լինի Թիֆլիսի արտաքինի մասին։ Մանաւանդ որքան են գովել, որքան են գովում Թիֆլիսի այգիները։

Բուսականութիւն, այո, մենք ունենք։ Կան շատ ծառատաններ, որոնք տաքից խաշվող ազգաբնակութեան համար կարող էին իսկական երջանկութիւն լինել։ Սակայն ինչ անենք, որ մեր արդիւնաբերական դարում ամեն մի այգի կամ այգու նմանութիւն ունեցող բան դարձել է արդիւնաբերական հիմնարկութիւն։

Անցնում էք Դվօրցօվայա փողոցով, յիշում էք, որ կայ վրաց ազնուականութեան փոքրիկ այգին։ Տօթը ձեզ ձգում է դէպի այնտեղ։ Բայց յիշում էք, որ ձեզանից պիտի մուտքի վճար առնեն, որովհետեւ այնտեղ ինչ-որ ներկայացումներ են տալիս, յիշում էք, որ դուք պարտաւոր էք անպատճառ մի բան բերել տալ այգի պահողի խոհանոցից, ամենեւին իրաւունք չունենալով մտածել, թէ ինչ են տալիս ձեզ,—եւ ակամայ շարունակում էք քայլել խեղդող փողոցներում։

Ահա Ալէքսանդրեան այգին։ Բայց այնտեղ միայն երեխաներն են զբօսնում, վարձվող ծառաներն ու աղախիններն են նստած։ Իսկ երեկոյեան ժամի տասին, այն ժամանակ, երբ դուք մի քիչ ազատ էք գործերից, երբ մի կողմից էլ օդն է մի քիչ զովանում, այգու բոլոր երկաթէ դռները պինդ փակված են, որպէս զի ծառերի սաղարթների տակ, գիշերվայ մթութեան մէջ, տեղի չունենան զանազան տեսակ յանցանքներ։

Գնացէք «Մուշայիդ»։ Թէեւ հեռու, թէեւ փոքր է, բայց գոնէ այգի է, այն էլ հասարակական այգի։ Բայց ինչ պիտի անէք այնտեղ։ Ծառուղիներում—մթութիւն եւ ամայութիւն։ Մի հրապարակ կայ միայն, այնտեղ էլ նստելու տեղ չը կայ։ Նախաջրհեղեղեան մի քանի նստարաններ, բայց նստելու ցանկութիւն ունեցող քանի-քանի մարդիկ... Իսկ նստարաններ չեն գնում այն պատճառով, որ կայ վանդակատի մի մեծ տարածութիւն, ուր շարված են սպիտակ սփռոցներով ծածկված բազմաթիւ սեղաններ, ուր վազվզում են լաքէյները։ Ուրեմն դարձեալ պիտի հանէք ձեր քսակը, եթէ ուզում էք նստելու մի յարմար տեղ գտնել։

Էլ ինչ մնաց Թիֆլիսում։ Հա, Վէրայի այգիները։ Այնտեղ լաւ է. բայց այնտեղ գնալ կարող են նրանք, որոնց համար օրէնը մի քանի բուբլի դէն գցելը ոչինչ բան է, նոյն իսկ զուարճութիւն է։ Ուրեմն, դարձեալ «բաղդաւորների» տեղ։ Իսկ խօսքը բաղդաւորների մասին չէ. երբ տաք ու կրակի, ձիւնի ու սառոյցի հարց կայ, այդտեղ բաղդաւորներին չեն էլ յիշում։ Մի եւ նոյն է, նրանք առանց ուրիշների հոգատարութեան կարող են պահել իրանց պատուական գլուխը։ Եւ բացի այս բոլորից, Վէրայի այգիներում դուք ապահովված չէք թէ մի որ եւ է «քէֆը չաղացածի» խէնթարը չի խրվի ձեր կողքի մէջ։ Թիֆլիսի քրէական տարեգրութիւնը, ինչպէս յայտնի է, առատ նիւթեր վերցնում է մանաւանդ Վէրայի այգիներից...

Կայ եւ Բուսաբանական այգին։ Գնում են մարդիկ այնտեղ, գնում են, ուշադրութիւն չը դարձնելով, որ գնալը հեշտ չէ, որ Թիֆլիսում իւրաքանչիւր կառք չէ կարող բարձրացնել ձեզ այն զառիվայրի գլուխը, ուր բացված է այգու դուռը անխտիր ամենքի առաջ։ Դուք, վերջապէս տեղ էք հասնում։ Բայց ինչ տեղ է դա։ Մի երկար ու նեղ ծառուղի, որ լեփ-լեցուն է մարդկանցով։ Շարժվելու տեղ չը կայ։ Եւ մի հատ աթոռ ճարելու ու մի ժամ նստելու համար դուք դարձեալ պարտաւոր էք կանչել լաքէյին եւ մի բան պատուիրել։

Եւ էլ ուրիշ ոչ մի տեղ. չը կայ մի անկիւն, ուր դուք ազատ լինէք «արդիւնաբերող այգու» պահանջներից։ Եւ նստում է Թիֆլիսեցին իր տանը, իր նեղ, գերեզմանի պէս նեղ բակում, իր փողոցի մի անկիւնում, բաց է անում բերանը, մի կտոր օդ, զովութիւն է հայցում երկնքից։ Չորս կողմը տօթ է. ծանր է շունչ քաշել, կարծես երկինքը ընկած է վրադ ու ճնշում է։ «Ի՞նչ աներ», հառաչում է խեղճը...

Այդ հառաչանքը երգող բանաստեղծներ ուր որոնենք։ Չը կան «խալխի նօքարներ»։

Բայց ինչու՞ ենք բանաստեղծներին որոնում։ Ահա «խալխի նօքարի» պաշտօնով պարծեցող ձայնաւորներ շատ կան մեր քաղաքում։ Ընտրութիւնների ժամանակ նրանք ինչպէս են վազվզում, ինչպէս են թրպռտում։ Գազ ու կէս երկարութեամբ լեզուներ են հանում. էլ կուսակցութիւն, էլ պրօգրամ, էլ դրօշակ, էլ հիներ ու նորեր, էլ հասարակութեան ծառայել, էլ այս ու այն, ամեն բան։ Վերջանում է վազվզելու, թրպռտալու ժամանակը. մեր սրբատացուները բազմած են Երեւանեան հրապարակի վրա բարձրացած քաղաքային մեծ տան մէջ եւ իրանց արդէն անուանում են ոչ թէ «խալխի նօքարներ», այլ «քաղաքի հայրեր»։

Չը վիճենք այդ անունների մասին։ Թող ինչ ուզում են իրանց անուանեն։ Ես կը ծանօթացնեմ ձեզ Թիֆլիսի մի «հմայքի» հետ էլ։

Գնանք այն վիթխարի կամուրջը, որ չինել է տուել իշխան Վօրոնցով եւ որ միացնում է քաղաքի երկու մասերը։ Գիտէք, որ երկու կամուրջներ են դրանք, որովհետեւ կուրը այդտեղ կազմում է մի կղզի, որ կոչվում է Մադաթեան կղզի։ Նայենք հէնց այդ կղզուն։ Ի՞նչ է նա ներկայացնում։ Մի ուրիշ, բարեկարգ, գեղեցիկ քաղաքում կղզին կը լինէր մի սիրուն այգի, ուր ժողովուրդը՝ երեք կողմից ջրով շրջապատված այդ տեղում կը գտնէր վայելչութիւն, հանգստեան գեղեցիկ ժամեր։ Իսկ մեզանո՞ւմ։—Մեզանում դեռ մեծացնում են կղզին։—Ի՞նչպէս։

Ուշադրութիւն դարձրէք հարիւրաւոր սայլերի վրա, որոնք օրն ի բուն քաղաքի զանազան կողմերից գալիս են այդտեղ, դատարկվում։ Ի՞նչ է նրանց բերածը։—Ահա հարցը հէնց այդ է։ Բերում են տների, բակերի գիբիլը, փոսերը. բերում են, դատարկում այդտեղ ու էլի գնում, էլի բերում։ Տարիներից ի վեր այդպէս է անվում։ Շինարարութիւնը, ինչպէս յայտնի է, մեր գործիչների քունն է կտրել։ Փող չունենք, բայց խելք հօ ունենք։ Առանց ծախսեր անելու, հողի ու գիբիլի ահագին սարեր ենք կուտում Մադաթեան կղզու վրա, որպէս զի մեծանայ նա։ Ճիշտ է, Կուրը երբեմն կատաղում է եւ քշում տանում է մեր դիզածը, բայց մենք յուսահատվել չը գիտենք. բերում են սայլերը, դատարկում են իրանց թանգագին բեռները եւ էլի մեծանում է կղզին։ Ի՞նչ կայ որ. ծախս չէ պահանջվում քաղաքային մնդուկից. տների գիբիլը հօ չէ վերջանալու. այդ «բարիքը» պէտք է մի տեղ թափել, չէ՞։

Հիմա տեսէք, թէ ինչ է լինում։ Քամին Կուրի վրա համարեա անպակաս է լինում։ Եւ, տարաբախտաբար, համարեա միշտ վերեւից է այդ քամին, այն կողմից, ուր դիզվում են սայլերի բեռները։ Ահա քամի է։ Մադաթեան կղզու վրա փոշու ամպեր են բարձրանում. դուք տեսնում էք, թէ ինչպէս այդ ամպերը ոլորվելով գալիս են եւ տարածվում կամուրջի դէմ աշխատել։ Տանջվում, հեծում էր առողջ ծերունին. քուն դադար չունէր. կօպէկ-կօպէկի վրա դիզելով—փող էր հաւաքում։

Թող անվերջ թափվող արտասուքներից ծովեր գոյանան։ Անթիւ, անհամար մարդկային խիղճը քարեր դառնալով՝ սարեր կը կազմվեն չորչոր ժայռերից։ Եւ թող յաւիտեան արտասուքի ծովը գոռում-գոչումով խփի ժայռերին—ժայռն անդրդւայ է...

Շոգին բռռում է, մեքենան ճչում եւ արագութեամբ երկաթէ ձողերն իջնում են դէպ ցած, հորի յատակը։

Մարտոն կանգնած է երկաթէ մի մեծ բանալի ձեռքին։ Մեծ անիւներով, ճախարակաձեւ մեքենան արագ հակայ ակներով պտոյտ է գործում, ձողերը իջնում են, Մարտոն իր ձեռքի մեծ բանալիով ամրացնում է մէկը միւսին եւ դարձեալ արագ իջնում են ձողերը իրար յետեւից. Մարտոն մօտեցաւ արագ սլացող ակներից մէկին կանգնած ժամանակ։ Եւ դեռ չէր դրել ոտքը անիւին, մի թեթեւ սխալ, Մարտոյի ոտը անիւի միջին՝ ինքը ողջ մարմնով պտոյտ էր գալիս...

Տարան Մարտոյին... Թշուառ ծերունի, վրան շունչ չը կար։ Բժիշկ, միջոցներ, երկար ամիսներ հիւանդանոցի ծանր օդի մէջ... Եւ Մարտոն ահա կանգնած է ոսկու սեւ աղբիւրի մօտ մի ոտի վրա...

Կանգնած նայում էր արագ սլացող սեւ ճախարակին, նայում, սպասում էր...

Մի կառք մօտեցաւ բուրգի դռնակին. Մարտոն չտապով փափախը հանեց եւ, խոնարհ գլուխ տալով, նայում էր մաքուր հագնված պարոնի դէմքին։ Վերջինս, մի ինտելիգենտ, շատ մռայլ էր։

—Դէհ ինչ ես ուզում, ես քեզ չասացի աչքիս չերեւաս, յիմար ծերունի։

—Աղա ես խեղճ եմ, քեսաբը ու անտէր, ախբր ձեր գործում էս օրին ընկայ։

—Հա, հա, մեր գործում... Կորիր անիծված, դեռ խօսում էլ է։ Ադա, կարապետ, էս պառաւ մկան աչքիս առաջից իսկոյն կորցրէք, ու էլ չը թողնէք աչքիս երեւայ, թէ չէ հա գիտէք...

—Աղա, վերեւում ախբր Աստուած կայ, խեղճ եմ, մեղք եմ...

Եւ արտասուքները թափվում իջնում էին ծերուկի այտերի վրա...

—Դէ կորի, քոփակ, քու երեսից մենք հօ կորչելու չենք,—բանուորի մէկը հրեց Մարտոյին, որ երեսալով փռվեց իր մօտի կեղտ ու մրուրի չաղախի միջին...

Ոռնում էր շոգին, շնչում ու շնչում։ Սեւ ճախարակը անվերջ պտոյտով ֆռիկ էր տալիս, կլորիկ դոյլը ոսկի էր բերում—անթիւ անհամար—չաչում ու չաչում...

Եւ օր ու գիշեր շնչում էր բուրգը ու ոսկու անվերջ աղբիւրը ելնում, թափվում, գնում էր...

Մկ. Միսաքեանց

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԵՐՈՒԿԸ

(Պատկեր)

—

Նաւթով ողողված, մրուրով ներկված, մրի ու նաւթի չաղախով ծեփված, դժոխքի շնչով, բանուորի ձեռքով կանգնած սեւ բուրգը, միլիոնների քրքիջը դէմքին, սեւ ճախարակի անվերջ պտոյտով ժպիտ էր ուղարկում դժոխքի Աստուծուն։

Շնչում էր բուրգը սեւ խողովակից շոգու կաթնագոյն թանձր, հոտած շնչով.—շնչում էր ու շնչում...

Եւ ամեն անգամ շոգու բռռոցով նաւթի կլորիկ դոյլը լեփ-լեցուն ոսկի էր բերում. հոսում, գնում էր ոսկու առուակը...

Հէնց այդ սեւ բուրգի սեւ մրով ծեփված դռնակի կշտին կանգնած էր Մարտոն մի ոտի վրա... երկճիւղ գլխանի զոյգ մահակներին կռներով յենված...

Կարծես չէր լսում շոգու դիւային քրքիջը, որ իր հոտած շնչով երբեմն շոյում էր նրա երեսը։ Աչքերը յառած բուրգի գագաթին, արագ, անընդհատ միշտ պտոյտ գործող սեւ ճախարակին, Մարտոն թաղված էր մտքերի մէջ...

Դեռ շատ չէ անցել այն օրից, երբ թողնելով աղջիկների աչքերը արտասուքով, պառաւ Հռոռոմի սիրտը քրքրված եւ պառաւական վերջին չոր արտասուքն աչքերում չորացած, Մարտոն, արդէն ծեր, դուրս եկաւ տանից։ Դուրս եկաւ, թողեց սարեր ու ձորեր, կանաչ հանդ ու արօտներ։ Ժամի բազումը հին բարեկամին, Քեսասա Կարօյին թողեց ճիտը ծուռ. նոյն իսկ ժամի մէջ, անկիւնում փռված իր չոր խարը—մնաց խեղճ անտէր... Ու եկաւ Բագու, ոսկու աշխարհը—պարտքից պրծնելու, փող աշխատելու, ծերութեան վերջին խղճի վրա ծանրացած պարտքերը տալու։

«Մեղքերը լալու՝ պարտքերը տալու»—այս ծանրացած էր թշուառ ծերունու էութեան վրա։

Հին ծանօթների խորհուրդներով, Մարտոն բուրգի մէջ, հէնց հոր փորվելու առաջին օրից, շատ չնչին վարձով ծանր աշխատանքի մէջքը դէմ արաւ...

Ծերունի Մարտոն «բուրուղի» մշակ. Մարտոն ապշած էր. շոգու անընդհատ սուլոցն անսովոր, մեքենաների դղրդիւն, շառաչ. մռայլ վարպետի կամ նրա օգնականի լպիրշ խօսքերի, հրամանների տակ ճնշված—նա աշխատում էր... Եւ ինչ աշխատանք—տանջանքների ծով... Ոչ հանգստութիւն, ոչ դադար։ Ցամաք հաց միայն, կամ թէ չէ միշտ «չայ» էլի չոր հացով...,

«Մեղքերը լալով, պարտքերը տալով»... Պէտք էր աշխատել։ Տանջվում, հեծում էր առողջ ծերունին. քուն դադար չունէր. կօպէկ-կօպէկի վրա դիզելով—փող էր հաւաքում։

Թող անվերջ թափվող արտասուքներից ծովեր գոյանան։ Անթիւ, անհամար մարդկային խիղճը քարեր դառնալով՝ սարեր կը կազմվեն չորչոր ժայռերից։ Եւ թող յաւիտեան արտասուքի ծովը գոռում-գոչումով խփի ժայռերին—ժայռն անդրդւայ է...

Շոգին բռռում է, մեքենան ճչում եւ արագութեամբ երկաթէ ձողերն իջնում են դէպ ցած, հորի յատակը։

Մարտոն կանգնած է երկաթէ մի մեծ բանալի ձեռքին։ Մեծ անիւներով, ճախարակաձեւ մեքենան արագ հակայ ակներով պտոյտ է գործում, ձողերը իջնում են, Մարտոն իր ձեռքի մեծ բանալիով ամրացնում է մէկը միւսին եւ դարձեալ արագ իջնում են ձողերը իրար յետեւից. Մարտոն մօտեցաւ արագ սլացող ակներից մէկին կանգնած ժամանակ։ Եւ դեռ չէր դրել ոտքը անիւին, մի թեթեւ սխալ, Մարտոյի ոտը անիւի միջին՝ ինքը ողջ մարմնով պտոյտ էր գալիս...

Տարան Մարտոյին... Թշուառ ծերունի, վրան շունչ չը կար։ Բժիշկ, միջոցներ, երկար ամիսներ հիւանդանոցի ծանր օդի մէջ... Եւ Մարտոն ահա կանգնած է ոսկու սեւ աղբիւրի մօտ մի ոտի վրա...

Կանգնած նայում էր արագ սլացող սեւ ճախարակին, նայում, սպասում էր...

Մի կառք մօտեցաւ բուրգի դռնակին. Մարտոն չտապով փափախը հանեց եւ, խոնարհ գլուխ տալով, նայում էր մաքուր հագնված պարոնի դէմքին։ Վերջինս, մի ինտելիգենտ, շատ մռայլ էր։

—Դէհ ինչ ես ուզում, ես քեզ չասացի աչքիս չերեւաս, յիմար ծերունի։

—Աղա ես խեղճ եմ, քեսաբը ու անտէր, ախբր ձեր գործում էս օրին ընկայ։

—Հա, հա, մեր գործում... Կորիր անիծված, դեռ խօսում էլ է։ Ադա, կարապետ, էս պառաւ մկան աչքիս առաջից իսկոյն կորցրէք, ու էլ չը թողնէք աչքիս երեւայ, թէ չէ հա գիտէք...

—Աղա, վերեւում ախբր Աստուած կայ, խեղճ եմ, մեղք եմ...

Եւ արտասուքները թափվում իջնում էին ծերուկի այտերի վրա...

—Դէ կորի, քոփակ, քու երեսից մենք հօ կորչելու չենք,—բանուորի մէկը հրեց Մարտոյին, որ երեսալով փռվեց իր մօտի կեղտ ու մրուրի չաղախի միջին...

Ոռնում էր շոգին, շնչում ու շնչում։ Սեւ ճախարակը անվերջ պտոյտով ֆռիկ էր տալիս, կլորիկ դոյլը ոսկի էր բերում—անթիւ անհամար—չաչում ու չաչում...

Եւ օր ու գիշեր շնչում էր բուրգը ու ոսկու անվերջ աղբիւրը ելնում, թափվում, գնում էր...

Մկ. Միսաքեանց

վրա։ Իսկ այդտեղով անցնում են հարիւրաւոր, հազարաւոր մարդիկ։ Դուք հիմա ենթադրում էք, թէ ինչեր կան այդ փոշու մէջ։ Բայց ոչինչ ենթադրութիւն հարկաւոր չէ. դուք միայն նայեցէք կամուրջին։ Ամբողջ տարածութեան վրա, Վօրոնցովի արձանից մինչեւ Ալէքսանդրեան այգին, պարում են կեղտոտ թղթի կտորներ, զանազան կտորտանքներ. իսկ մայթերի վրա յարդախառն փոշու, երեւի կենդանիների աղբի, շերտեր են ձգւում։

Եւ թափվում է այդ բոլորը ձեզ վրա, եւ դուք ակամայ վայելում էք այդ բոլորը։ Ի՞նչ պէտք է անէք։ Ձեզ հարկաւոր է գետի միւս ափը անցնել, իսկ Կուրի միջով չէք կարող անցնել, նա մեծ գետ է։

Բժիշկները առողջապահութիւն են քարոզում, գիտնականները ապացուցանում են, որ բոլոր հիւանդութիւնների սաղմերը փոշու մէջ են բոյն դրած։ Ամեն օր գրքեր եւ գրքոյկներ են հրատարակվում, ձեզ խրատում են, ձեզ զգուշացնում են։ Բայց ի՞նչ անէք դուք. ի՞նչ անէք, երբ ձեզ հանում են կամուրջի վրա եւ այնտեղ ձեր գլխին են թափում փոշի, այն էլ ի՞նչ տեսակ փոշի։ Փախչել, ազատվել չէք կարող, ուրեմն պիտի համբերութեամբ կլանէք։

Թիֆլիսի այս «հմայքը» մշտական է. նա կայ ամառ ու ձմեռ. բայց ամառը մանաւանդ զգալի է նա. երեւակայեցէք թէ ամառը ի՞նչ տեսակ արեգակ է այրում, չորացնում կղզու այն կոյտերը, ի՞նչ տեսակ մանր փոշի է կազմում. սովորական ժամանակն էլ, այսինքն երբ քամի չը կայ, օդը պիտի տոգորված լինի այդ փոշիով...

Բայց մի անգամ էլ ուշադրութիւն դարձրէք Մադաթեան կղզում դասարկվող սայլերի վրա։ Դուք կը տեսնէք, որ նրանք բաց չեն տանում իրանց բեռները։ Չէ կարելի, արգելված է. իւրաքանչիւր սայլի վրա պիտի մի հատ չոր գցած լինի։ Հասկանում էք, ի հարկէ, թէ ինչու։ Որպէս զի փողոցներով անցնելիս՝ սայլերից փոշի չը բարձրանայ։ Դա վատ է, վնասակար է։ Իսկ երբ փոշին բերվում է կամուրջի վրա եւ լցնում է մարդկանց թոքերը—այդ... նախատեսված չէ։ Գոնէ մի ահագին չոր պատրաստէին եւ ամբողջ Մադաթեան կղզին էլ ծածկէին...

Դուք այժմ հասկանում էք, թէ ուր է գնում Թիֆլիսի զիբիլը։ Մադաթեան կղզին չէ նրա պահեստի տեղը։ Ո՛չ, մարդկանց թոքերն են այն տեղը, ուր պարտկվում է այդ «թանգագին աւելնորդը»։

Ահա ինչ «հմայքներ» ունի մեր Կովկասեան մայրաքաղաքը։ Եւրոպական մի քանի քաղաքներում, ասում են, փողոցների կողքով նոյն իսկ թքամաններ են շարում, որ մարդիկ այնտեղ թքեն։ Իսկ մեզ մօտ...

Լ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

I

Բժ. Վ. Արծրունի. «Վատ ցաւ». 32 երես. գինը 6 կոպ. Թիֆլիս 1901 թ.։

Բժ. Վ. Արծրունու «Բժշկի զրոյցներ»-ի № 2-ը, որ կրում է «Վատ ցաւ» վերնագիրը, նոյնպէս բարեխղճօրէն է կազմված, ինչպէս եւ հեղինակի միւս աշխատութիւնները։

Առաջին գրքոյկը՝ «Մի խմիր» դուրս է գալիս երկրորդ տպագրութեամբ, կարճ ժամանակամիջոցում. եթէ չենք սխալվում, առաջին անգամ այդ գրքոյկը լոյս տեսաւ 5000 օրինակ. չեղած դէպք մեր կեանքում։ Մենք պէտք է ուրախանանք, որ մեր հասարակութիւնը հասկանում է այդ գրքոյկների օգուտը։

Առանձին շնորհակալութեան արժանի է մեր տաղանդաւոր գրող յարգելի Լէօն, որի ազդու կոչը ամեն կերպ նպաստում է այդպիսի հանրօգուտ հրատարակութիւնների լոյս տեսնելուն, որը սկսում է տեղ-տեղ արձագանք գտնել, եւ մեր ժողովրդի իսկական չարիքը ու ցաւերը իրանց սրտի ժամ ընդունող անհատները չեն խնայում իրանց լուման մի այդպիսի կարեւոր գործի աջողութիւնը ապահովացնելու։

Փառք եւ պատիւ արիութեան եւ աշխատասիրութեան ազնիւ հեղինակին եւ մարդկութեան բոլոր այն համեստ բարեկամներին, որոնք պաշտպանում են այդ տեսակ հրատարակչական սուրբ գործը։ Եւ իսկապէս այդ զանազան ախտերի եւ հիւանդութիւնների դէմ կարելի է մաքառել միայն մի զէնքով, այն է ժողովրդի լայնածաւալ լուսաւորութեամբ։

Նոյնանման օգտակար գրքեր կարող էին հրատարակել եւ մեր իրաւաբանները։ Ցանկալի էր դրանց մասնակցութիւնը իրանց գրչով ժողովրդի ցաւերը դարմանելու։ Ցանկալի էր թարգմանել գոնէ Պավլէնկովի հրատարակութիւններից 10—15 գրքոյկներ, որոնց գները 3—5 կոպ. է։

Թող այս «Վատ ցաւ» գրքոյկը տարածվի ժողովրդի մէջ մի քանի տպագրութեամբ, որովհետեւ, դժբաղդաբար, սիֆիլիսը ծանր քրոնիքական հիւանդութիւն է եւ կայ ամեն տեղ թէ քաղաքներում եւ թէ գիւղերում, թէ հարուստի եւ թէ աղքատի տներում եւ չի խնայում ոչ մի անհատի։

Մի հիւանդը կարող է 5—10 կամ աւելի մարդ վարակել։

Սարսափելին այն է, որ այդ հիւանդութիւնը ժառանգական է։ Որքան գերդաստաններ ոչընչացել եւ ոչնչանում են, որքան երեխաներ վիժվում են եւ ինչքան անմեղ զոհեր են լինում։

Այս վերջերումս արդէն ապացուցված է, որ սիֆիլիսը կարելի է բժշկել, բայց հարկաւոր է ամենաքիչը վարակվելուց առաջին 2—3 տարին կանոնաւոր բժշկվել։ Միմիայն այս պայմանով կարելի է ապագայ մատաղ սերունդը ազատել զանազան տանջանքներից։

Թող ամեն մի մարդ իր սրբազան պարտականութիւնը համարէ պակվելուց առաջ առնել բժշկից թոյլատրութիւն։

Շնորհիւ սոցիալական պայմաններին եւ մեր նեարդային դարուն՝ կանոնաւոր չը բժշկվող հիւանդների եւ թոյլ կազմուածքների հետ առաջանում են այնպիսի ծանր հետեւանքներ, որպիսին են ողնաշարի եւ ուղեղի հիւանդութիւններ, տաբէս եւ պրոգրեսիվ պարալիչ։

Այո, սիֆիլիսը շատ մեծ չարիք է, ժամանակ է դաստիարակել մատաղ սերունդը, որ նա կարողանայ զսպել իր կրքերը։ Թող ամեն տեղ բացվեն ժուժկալական ընկերութիւններ, ապա թէ ոչ՝ ալկոհոլիզմը սիֆիլիսի հետ միասին առաջացնում են այլասերումն—վատասերումն։

Այս գրքոյկի մասին միայն կարող էինք ասել, որ իզուր է յարգելի հեղինակը անուանել նրան «Վատ ցաւ». աւելի լաւ էր, մեր կարծիքով, հեռու մնալ այդ տեսակ հնացած տերմիններից։ Նոյնպէս ցանկալի էր, որ պատկերները աւելի պարզ լինէին։

Ցանկանում ենք, որ այս տեսակ գրքեր գոնէ կարդային խմբով, ամեն տեղ, եւ աշխատէին տարածել հեղինակի ազնիւ եւ ծանր աշխատանքը, յօգուտ մեր դժբաղդ ժողովրդին։

Բ.

II

„Anatolische Ausflüge“. Reisebilder von Colmar Freiherr v. d. Gölz Pascha mit 37 Bilderu und 18 Karten.

Գիրքն իր մէջ պարունակում է հեղինակի զանազան ժամանակներում (1889—96 թ.թ.) կատարած ճանապարհորդութիւնից ստացած տպաւորութիւնները, տեղերի (Սարանչա, Բելեջիկ, Էսքիշեհէր, Անգօրա, Թարաքլի, Իզմիդ իրանց շրջականներով եւ այլն) ու ճանապարհների նկարագրութիւնը, իսկ երբեմն խորհրդածութիւններ ու խօսակցութիւններ թիւրքերի ու թիւրքահպատակների հետ։

Հեղինակը իր եզրակացութիւնների մէջ աշխատել է անաչառ լինել, սակայն տեղ-տեղ պատահում են սխալ մտքեր։ Այսպէս օրինակ 36 երեսում նա ասում է, թէ Թիւրքիայում ապրող զանազան ազգութիւնների մէջ ոչ մի թշնամութիւն չէ եղել եւ այդ բանը առաջացել է միայն վերջին ժամանակներս՝ օտար ագիտացիայի շնորհիւ։

Բայց դա միանգամայն անհիմն է, որովհետեւ ամբողջ դարերի ընթացքում քրիստոնեայ տարրը միշտ ճնշվել, հալածվել է մահմեդականներից ու ամբողջ կառավարութիւնից եւ ոչ մի ագիտացիա հարկաւոր չէր, որպէս զի նա հասկանար իր անտեսական եւ սոցիալական աննախանձելի վիճակը։

Ընդհանուր առմամբ, Գոլց փաշայի այդ աշխատութիւնը տալիս է ամփոփ տեղեկութիւններ Անատոլիայի եւ նրա աղգաբնակութեան մասին եւ կարող է որոշ օգուտ մատուցանել այն մարդկանց, որոնք ուզում են ճանապարհորդել յիշեալ երկրում կամ մի թեթեւ գաղափար կազմել նրա մասին։

Ե. Թ.

III

Գէորգ Մէլիք-Կարագեօզեան. Գերմանական օգնութեան ընկերութիւնները Ցանկահայաստանի համար. (հետազօտութիւն). 77 եր. գ. 35 կ. Թիֆլիս 1901 թ.

Եթէ հարց դրվի, թէ ո՞վ է աւելի օգնել թիւրքահայ որբերին՝ օտարները թէ՞ հայերը, բոլորովին համարձակ կերպով կարելի է ասել—օտարները։

Այդ օտարներից մի մասի, գերմանացիների մարդասիրական գործն է հետազօտութեան ենթարկել պ. Մէլիք-Կարագեօզեան։

Հետազօտութիւնը, որ կատարված է բարեխիղճ կերպով եւ անաչառ ոգով, այն եզրակացութեանն է բերել հեղինակին, թէ գերմանացիները, ընդհանուր առմամբ, հայ որբերին օգնելիս՝ չեն ունեցել եւ չունեն յետին մտքեր, քաղաքական կամ հաւատորսական նպատակներ։ Առանձին դէպքերում եւ յաճախ անդիտակցաբար մարդասիրական օգնութեան գործին խառնվել են եւ կողմնակի տարրեր, բայց մեր վերաբերմունքը դէպի մի մեծ գործունէութիւն պէտք է որոշվի նրան զեկավարող ընդհանուր դրդումներով եւ ոչ թէ նրա հետ զուգորդվող պատահական երեւոյթներով։

Գրքոյկը պարունակում է շատ հետաքրքրական տեղեկութիւններ, բայց գրված է անփոյթ կերպով, առանց սիստեմի, առանց ոճի եւ լիքն է կոպիտ վրիպակներով։

Տ. Ե.

—

Նոր ստացված հրատարակութիւններ. 1) «Հայրենիքի զոհեր». (պատկեր մը տաճկահայաստանի իրական կեանքէն). գրեց Ղազարոս Պ. Նահապետեան. 191 եր. գ. 1 ֆր. 50 կ. Վառնա. 1901 թ. 2) Յովհ. Արարաջեանց. Մայրենի լեզու. առաջին տարի (պատկերազարդ). 64 եր. գ. 30 կ. Ալէքսանդրապոլ 1901 թ. 3) Ալէքսանդրապոլցի «Աշըղ Ֆիզահու երգերը». երկրորդ տպագրութիւն. 110 եր. գ. 50 կ. Թիֆլիս 1901 թ. 4) Ա. Աղաբաբեան. Հալաբարյոց մասւոր կեանքը. 44 եր. գ. 20 կ. Թիֆլիս 1901 թ. 5) Առաջին սէր. հայկական ռոմանս. խօսքերը Ս. Շահազիզեանի, երաժ. Մ. Վարդիկեանի. գ. 40 կ. Ս. Պետերբուրգ 1901 թ. 6) Հովիւ. հայկական ռոմանս. խօսքերը Ս. Շահազիզեանի, երաժշ. Մ. Վարդիկեանի գ. 50 կ. Ս. Պետերբուրգ 1901 թ. 7) Հաշիւ բարեգործական ընկերութեան հայոց Նոր-Նախիջեւանի վասն 1900 ամի. Նոր-Նախիջեւան 1901 թ. 8) Հաշիւ Երեւանայ ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ երէցփոխ Դ. Մ. Պապօվի սկսած 21-ից ապրիլի 1900 ամի մինչեւ 1-ն յունվարի 1901 ամի. Երեւան 1901 թ. 9) Կանոնադրութիւն Ախարագի հայ-լուսաւորչական կանանց բարեգործական ընկերութեան Ախարագում. Ախարագ 1901 թ. 10) Проектъ устава Асхабадскаго Армяно-Григоріанскаго женскаго благотворительнаго Общества Асхабадъ 1901 г. 11) Отчетъ Кавказскаго общества исправительныхъ земледѣльческо — ремесленныхъ колоній и пріютовъ за 1900 годъ. Тифлисъ 1901 г. 12) ანგარიში „ქართველთა შორის წერა-კითხვის გამავრცელებელის საზოგადოების“ მოქმედებისა 1900 წ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒԻ

—

Յունիսի 4-ին

Հազար անգամ երանի ենք տալիս պօլիցիայի ժամանակներին, երբ դեռ մեր քաղաքը ինքնավարութիւն չէր ստացել։ Գոնէ այն ժամանակ պրիստավը կանգնում էր, հարկադրում մաքուր պահել փողոցը, չինել, կարկատել քանդվածները, կարգին մայթեր դնել. գոնէ փողոցներում ապականութիւններն այնքան չէին թափվում, ինչքան այսօր. գոնէ պրիստավի սպառնալիքը, պրոտօկոլը, դատարանում տուգանք տալու երկիւղը սարսափ էին ազդում ձեզ վրա։

Իսկ այսօր նայեցէք եւ տեսէք, որ մի ամիս շարունակ քաղաքի առաջնակարգ փողոցներից մէկով հոսում է զօրանոցի արտաքնոցը, իր ամբողջ կեղտոտութեան դարշահոտութիւններով լցնում տներ, մարդկանց քթածակեր, եւ անցուդարձ անողները քիթ ու պռունգ ծածկած շնչապահ «փուֆ»-եր է, որ արձակում են,—եւ հոգացող չը կայ։

Փորձեցէք փողոցի մի մայթից միւսը՝ անցնել այնպէս, որ ձեր ոտը տիղմի մէջ չը թաղվի։ Ի՞նչ է այդ։ Նահանգապետի, կառավարչապետի կամ ուրիշ պետի Շուշի գալու լուրն առնում են թէ չէ՝ սկսում են փողոցների քանդված փոսերը սեւ հողով լցնել, եւ արի դու անձրեւային ժամանակն անցիր այդ փողոցներով։

Փորձեցէք մսագործին, հացավաճառին տակաւայի անուն տալ, եթէ չէք ուզում ժամերով նրա խոնարհ ծառան լինել կամ օրերով մսի կարօտ մնալ։

Ո՞վ է մեղաւորը։

Մի ատելի սկզբունք է մտած մեր քաղաքի մէջ.—«եթէ 12 կ. միս չը նշանակես, 15-ով չեն տալ, եւ եթէ 3½ կ. հաց չը նշանակես, 4-ով չեն ծախի»։

Ո՛չ, պարոններ, դրանով մենք փչացնում, անբարոյականացնում ենք ժողովրդին։ Նշանակեցէք գոնէ այնքան, որքանով կարող էք ծախել տալ։ Մեզ մի արժանացնէք դրանց փընթփընթոցին, դրանց սառն հայեացքներին։

Տ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Յունիսի 14-ին բաղդ ունեցաւ ներկայանալու Նորին Մեծութիւն Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնային Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Ս. Գոլիցին։

—

Պետերբուրգի համալսարանը մտնել ցանկացողների խնդիրքները կընդունվեն համալսարանի դիւանատունը յուլիսի 15-ից մինչեւ օգոստոսի 20-ը։

—

Ռուսաց թեմական իշխանութիւնը խորհուրդ է տալիս առանձնապէս զգոյշ վարվել՝ աղանդաւորների մասին դատաստանական գործեր սկսելու ժամանակ։ Թեմական իշխանութիւնը անհրաժեշտ է համարում, նախ քան այդպիսի գործեր սկսելը, մանրակրկիտ քննութիւն կատարել հոգեւոր անձերի միջոցով եւ իմանալ, թէ արդեօք աղանդաւորները խախտել են օրէնքը։

—

«Нов. Время» լրագիրը հաղորդում է, որ Թէհրանի ռուսաց դեսպանատան եկեղեցու վանահայր է նշանակված Ստեփան վարդապետը, որը Պետերբուրգի հոգեւոր կօնսիստորիայի անդամ է։ Ստեփան վարդապետը բարձր ուսում է ստացել Պետերբուրգի համալսարանում եւ հոգեւոր ակադէմիայում։

—

Հարց է յարուցված Մօսկվայի ինժենէրական դպրոցին նոյն իրաւունքները տալ, ինչ որ ունի հաղորդակցութեան ճանապարհների ինստիտուտը։ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը նշանաւոր կերպով մեծացնում է այդ դպրոցի չտատը։

—

Թիֆլիսի արհեստաւորների վարչութիւնը դիմեց կովկասեան գիւղատնտեսութեան եւ արդիւնաբերութեան ցուցահանդէսի կարգադրիչ մասնաժողովին՝ խնդրելով ձրի տեղ յատկացնել ցուցահանդէսում արհեստաւորների էկսպօնատների համար, որովհետեւ նրանցից շատերը միջոցներ չունեն, որ կարողանան վճարել իւրաքանչիւր քառակուսի սաժէնի համար 5-ից մինչեւ 15 ռուբլի։

—

Կովկասեան գիւղատնտեսական ցուցահանդէսի մասնաժողովը իր վերջին նիստում վճռեց ընտրել մի առանձին ժիւրի քննելու համար գովասանական թերթերի եւ մեդալների նկարները։ Ժիւրիի նախագահ ընտրված է Մ. Գ. Գակկէլ, անդամներ ընտրվեցին՝ Շիմկեվիչ եւ Տատիշչէվ ճարտարապետները, Գաբաեւ, Շմէրլինգ, Կօնդաուրով նկարիչները եւ ցուցահանդէսի կօմիսար իշխան Ի. Անդրօնիկով։

—

Հինգշաբթի, յունիսի 21-ին, Մօսկվայի Փոքր թատրոնի դերասանական խումբը փոքրաթիւ հասարակութեան առաջ՝ ի նպաստ Պօլեակովայի ներկայացրեց Օստրովսկու «Лѣсъ» պիէսը։ Հետեւեալ օրը թատրոնը գրեթէ ամբողջապէս լիքն էր, որովհետեւ Եարլօչկինայի բէնէֆիսն էր։ Տաղանդաւոր դերասանուհին իր բէնէֆիսի համար ընտրել էր Օստրովսկու «Бѣшеныя деньги» պիէսը, որի մէջ նա խաղում է Լիդիա Զերբօկարովայի դերը։ Աւելորդ է ասել, որ այդ օրը նա աշխատեց ցոյց տալ իր բազմակողմանի ընդունակութիւնները իրանց ամբողջ փայլով։ Հասարակութիւնը վարձատրեց նրան բուռն ծափահարութիւններով եւ բազմաթիւ ընծաներով։ Այսօր մօսկվացիների վերջին ներկայացումն է ի նպաստ չնորհալի դերասան Պագարինի։ Խաղալու են Օստրովսկու «Волки и овцы» պիէսը։

—

ՇՈՒՇՈՒԻՑ մեզ գրում են. «Այսօր 15-ին բացվեց մեր քաղաքում պ. Մ. Անանեանցի եւրոպական մի նոր չոգեբաղանիք»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Դատաստանական քննիչ Սիմէօն Շահ-Ազիզ-Կամսարական, որ ութ տարի է ինչ ծառայում է Ղուբայում, տեղափոխվեց Բաթում նոյն պաշտօնով։ Հասարակութիւնը նրան ճաշ տուեց. ընկեր դատաւորներն էլ առանձին։ Նա յարգված եւ սիրված էր այստեղի հասարակութիւնից, որպէս ազնիւ եւ խղճմտանքով մարդ»։

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Մարդու վրա վատ տպաւորութիւն է գործում եկեղեցում գանձանակ շրջեցնելը։ Բայց մենք, հայերս, ճարահատեալ հաշտվում ենք այդ տգեղ սովորութեան հետ, քանի որ մեր եկեղեցիների սպասաւորները առանց ռոճիկի են եւ պատահական տուրքերով են հայթայթում իրանց ապրուստը։ Այդ տեսակ քահանաների համար՝ գանձանակը կենսական նշանակութիւն ունի. դա է դրանց գլխաւոր աղբիւրներից մէկը։ Բայց ի՞նչ ասենք Պետերբուրգի եկեղեցու սպասաւորների մասին, որոնք փաշայական ռոճիկներով են ապահովված, չքեղ պատրաստի բնակարաններ ունեն ու մի եւ նոյն ժամանակ ստանում են նաեւ

ծխականներից սովորական եկամուտ եւ չեն քաշվում, շրջեցնել իրանց օգտին գանձանակը։ Այդ բաւական չէ, Զատիկ ու Զրօրհնէքի տօներին խանութները շրջում են օրհնելու։ Դա էլ մի շատ վատ եւ անպատուաբեր սովորութիւն է։ Բայց եկէք տեսէք, որ իբրեւ կրօնուսոյցներ արքունական դպրոցներում հայ մանուկներին ծաղրի առարկայ են դարձել մեր այդ տէրտէրները»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լօնդօնի լրագիրները հաղորդում են, որ անգլօ-հնդկական կառավարութիւնը մտադիր է այս տարի մեծ գումարներ ծախսել Հընդկաստանում ունեցած թնդանօթաձիգ ոյժերը բարւոքելու համար։ Գնվելու են մեծ թիւով նոր թնդանօթներ։

—Հռոմի «Patria» լրագիրը հաղորդում է, թէ Ֆարզանեան կղզիներից մէկի վրա (Կարմիր ծովում) ծածանում է գերմանական դրօշակը։ Այդ կղզիները պատկանում են Թիւրքիային, հետեւաբար, չը նայելով վերջերս պատող լուրերին, թէ իբր Թիւրքիայից մերժումն է ստացել Գերմանիան, նա այնուամենայնիւ աջողեցրել է այդ կղզիների վրա հիմնել ածխային կայարան, որ մեծ նշանակութիւն ունի նրա նաւատորմի համար։

—Անգլիական թագաւորը հրովարտակ է հրատարակել, որով յայտնում է, որ իր թագադրութիւնը կայանալու է եկող տարի յունիս ամսին։

—Արտասահմանի լրագիրները հաղորդում են, որ սերբիական Ալէքսանդր թագաւորը եւ Դրագա թագուհին այս ամառ ուղեւորվելու են Ռուսաստան։ Ոմանց ասելով, թագաւորական զոյգը կանցնի Կրիմով եւ կայցելի Անդրկովկասը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Անցեալ օր ես պատահեցի իմ ծանօթներից մէկին, որ շատ հետաքրքրված է Ախալցխայի գործերով եւ սպասում է նրանց շուտափոյթ վախճանին։

—Այդ գործերը շուտով չեն վերջանայ, բայց իրանք-իրանք կը մոռացվեն, ասաց նա։

—Ինչու՞ էք այդպէս կարծում, հարցրի ես։

Ծանօթս ժպտաց։ Ես գիտէի, որ նա սիրում է կատակներ անել, ուստի սպասում էի, թէ ինչ սրախօսութիւն պէտք է անէ։

—Կայ մէկ նշան, նկատեց նա խորհրդաւոր կերպով։

—Դէհ ասացէք տեսնենք, ինչ էք ուզում ասել։

—Ախալցխայում մի զարմանալի զուգադիպութեամբ խառնված էին այդ գործի մէջ երեք Մուրադեաններ։ Երէցփոխը, որի գործավարութեան առիթով յարուցված է գործը, Մուրադեան է, ուժեղ բողոքողներից մէկը, որ տպեց յօդուած «Մշակում», Մուրադեան է, տեղական յաջորդը, որ պէտք է վերջացնէր այդ գործը, եղիշէ վարդապետ Մուրադեանն էր։ Երեք Մուրադեան։ Այժմ լրագրում կարդացինք, որ նրանցից մէկը, յաջորդը, գնում է Պարսկաստան, երէցփոխը հեռացված է պաշտօնից. մնում է, որ բողոքող Մուրադեանն էլ թողնէ Ախալցխան։ Իսկ միւսներն էլ կը յոգնեն ապարդիւն ժաքառումից։

—Ցետոյ։

—Ցետոյ ասպարէզում կը մնայ լիազօր քընինչ Մեսրոպ քահանայ Մելեան, որ կը լուծի բոլոր հարցերը մի շատ գործնական միջոցով։

—Ի՞նչ միջոցով, հետաքրքրվեցի ես։

—Նա կը գրէ մի գիրք «Ախալցխայի գործերի շուրջը» վերնագրով, որտեղ, իր կարծիքով, ամենի հախից կը գայ։

—Իսկ գործը։

—Գործը երեւի կամաց կամաց կը մոռացվի։

—

Մելեանի ապագայ գրքի մասին խօսակցութիւնը ակամայ մեզ յիշեցրեց նրա այն գիրքը, որ դուրս եկաւ մի քանի շաբաթ սրանից առաջ։

—Որքան ճիշդ է, հարցրեց իմ ծանօթը, այն լուրը, որ պատում է բերանից բերան այդ գրքի մասին։

—Ի՞նչ լուր։

—Ասում են, թէ մշակականները, երբ իմացել են, որ Մելեանը գիրք է գրում Սեդրակեանի գրքի դէմ, ոտ ու ձեռք են ընկել ու չեն իմացել՝ թէ ինչ անեն։ Այս կողմ այն կողմ, ժողով, խորհուրդ են կազմել եւ պատգամաւորութիւն են ուղարկել տէր հօրը՝ «տէրտէր ջան, մեզ խնայիր, ինչ ուզում ես քեզ տանք, ինչ տուգանք ցանկանում ես նշանակիր, միայն թէ այդ սարսափելի բանը մի տպիր»։ Տէր հայրը մնում է անդրդուելի եւ բարկանալով նրանց ասում է՝ «ես ճշմարտութեան զինուոր եմ եւ ոչ մի հաշիւ ինձ չի կանգնեցնի իմ դիտաւորութիւնից»։ Մի՞թէ ճիշդ է այս բոլորը։

—Հարցրէք գրքի հեղինակից, պատասխանեցի ես։

—Կը հարցնէի, ասաց ծանօթս, բայց վախենում եմ հետեւանքից։ Մելեանը սիրում է ընդարձակ հերքումներ գրել. գուցէ այդ առիթով էլ նա մի գիրք գրէ «Տարածած լուրերի շուրջը» անունով։

—Ի՞նչ ինչ։ Քահանայութիւնից ազատ ժամանակները ինչու՞ չը զբաղվի գրականութեամբ։

—

Ասացի «գրականութեամբ»։

Մի ցաւ է մեզանում հերքումներ գրելը։ Նրանք անվերջ են եւ անծայր։

Հերքումներ գրողները երբէք չեն ուզում մտածել ոչ լրագրի եւ ոչ ընթերցողների մասին։ Շատ անգամ ամբողջ հերքումը կարելի էր ամփոփել մի տասն, տասն հինգ տողում. իսկ նրա հեղինակը ուղարկում է ձեզ մի ամբողջ գիրք, որի երկրորդ երեսը կրկնում է առաջին երեսի բովանդակութիւնը, երրորդը առաջին երկուսի կրկնութիւնն է եւ այդպէս անվերջ։

Մանաւանդ սիրում են հերքումներ գրել Պարսկաստանից։ Բաւական է մի անմեղ լուր տպվի լրագրում, մի դպրոցական հանդէս նկարագրվի, մի եղեռնագործութեան դէպք արձանագրվի, իսկոյն տասնեակ հերքումներ պատրաստ են։

Ինձ ցոյց տուին «Մշակի» խմբագրութեան մէջ 130 հերքում ստացված Պարսկաստանից, որոնցից իւրաքանչիւրը կարող էր կազմել մի բանաւիրական։

Եւ որ գլխաւորն է, նրանք գրված են այնպիսի չնչին առիթներով, որ մարդ չէ հաւատում իր աչքերին։

Իւրաքանչիւր հերքում ուղարկող կարծում է, թէ ամբողջ աշխարհը նրանով է զբաղված եւ որ նրա հերքումին սպասում է ամբողջ ընթերցող հասարակութիւնը։

—

Եթէ մէկը փորձէր հայերի մէջ մի յատուկ լրագիր հրատարակել հերքումների համար, նա ամենաապահովը կը լինէր Նիւթի կողմից։

Անշուշտ այդ լրագիրը, իբրեւ հայկական հերքումների շտեմարան, կը լինէր շատ ջրալի եւ անբովանդակ, բայց հերքողները շատ գոհ կը լինէին եւ նրան ոսկեկազմով կը պահէին ապագայ սերունդների համար։

Գուցէ այնտեղ փառաւոր տեղ բռնէին եւ թիւրքաց հիւպատոսների հերքումները, որոնցով հեղեղված են բոլոր եւրոպական խմբագրութիւնները եւ որոնք յաճախ լոյս չեն տեսնում խմբագրութիւնների տկարամտութեան պատճառով։

Ո՜րքան հոգատարութիւն այդ հերքում գրողների կողմից։ Նրանք չեն ուզում, որ խմբագրութիւնները մոլորութեան մէջ լինեն եւ մոլորեցնեն իրանց ընթերցողներին։

Այդ հոգատարութիւնը այնտեղ է հասնում, որ նրանք հերքումներ են գրում հայոց լրագիրների համար նոյն իսկ այն հեռագիրների դէմ, որոնք ստացվել են ռուսաց հեռագրական գործակալութեան միջոցով եւ ուրեմն կապ չունեն այս կամ այն խմբագրութեան հետ։

Որ՞քան հոգատարութիւն հայ մամուլի մասին։ Պէտք է երախտագէտ լինել։

Վրթին

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 յունիսի

ԲԵՐԼԻՆ։ «National Zeitung»-ի ասելով, կայսերական կանցլերը, Պետերբուրգ ուղեւորվող ռուսաց դեսպանին երէկ ընդունելիս, երկարատեւ խօսակցութիւն ունեցաւ հետը։

ԼԷՑՊՑԻԳ։ Լէյպցիգեան բանկի վերահսկիչ խորհրդի անդամ Կարլ Ֆէլիքս Շէֆֆէր, որ «Բէրզէր եւ Ֆօգտ» ֆիրմայի անդամ էր, այս առաւօտ սպանեց իրան գնդակով։ Ֆիրման յայտնեց, որ այդ իրան չէ վերաբերում, որովհետեւ ֆիրման երէկ ձեռնտու գնով ծախվել էր։

Կ. ՊՕԼԻՍ։ Բակտէրիօլոգիական հետազօտութիւնը ապացուցեց, որ ժանտախտային բացիլներ կան նաեւ կասկածելի նշաններով հիւանդացած՝ հացթուխի աշակերտի մօտ, ուրեմն այստեղ հաւաստված է ժանտախտի հիւանդացման երկու դէպք։

ԲՈՒԷՆՕՍ-ԱՅՐԷՍ։ Պարլամէնտը պաշարման դրութիւն յայտարարեց վեց ամսով։ Նախանցեալ օրը ժողովրդական ամբոխը եւ ուսանողները ցոյցեր արին նախագահ Ռօկի եւ նախկին նախագահ Պէլգրինիի դէմ. վերջինս վերք ստացաւ քարի հարուածից։

ԼԷՑՊՑԻԳ։ Երեկոյեան լրագիրները հաղորդում են, թէ մրուրի չորացման կասէլեան ընկերութեան հաշիւներում 14½ միլիոն պակաս երեւաց, որ, լուրերին նայելով, պարտք են նրան դիրեկցիայի եւ վերահսկիչ խորհրդի անդամները։ Ընկերութեան մօտ գրաւ դրված արժէքաւոր իրերը իբր թէ չքացել են. հաւանական են համարում, որ այդ արժէքաւոր իրերը նորից գրաւ են դրված եւ այն՝ լէյպցիգեան բանկում, մրուրի չորացման ընկերութեան վերահսկիչ խորհրդի զանազան անդամների հաշուին։

ՄԱՐՍԷԼ։ «Միտօ» նաւը, որ բերում է Չինաստանից հայրենիք վերադարձող առաջին զինուորներին, հասաւ այստեղ։ Բոլոր զինուորները, տախտակամածի վրա կանգնած, ողջոյնի բացականչութիւններ էին արձակում։ Ծովապետ Բէսօն բազմաթիւ օֆիցէրների հետ գընաց շոգենաւը՝ ողջունելու վերադարձած 1271 զինուորներին, որոնցից 120-ը հիւանդ են։ Նաւից սկսեցին իջնել ժամի 8-ին։ Ժողովուրդը ոգեւորված աղաղակներով էր ուղեկցում զինուորներին զօրանոց գնալիս։

ԼՕՆԴՕՆ։ Կոմս Կամպէդաուն հաղորդեց լորդերի ժողովին, որ յունիսի 23-ին ինքը ժողովի ուշադրութիւնը դարձնելու է Տրանսվաալեան կառավարութեան տուած կօնցէսիաները քննող յանձնաժողովի զեկուցման վրա, ինչ չափով որ այդ զեկուցումը վերաբերում է հարաւ-աֆրիկական երկաթուղուն, եւ նոյնպէս այն բանի վրա, որ, յանձնաժողովի հաւաստածով, յիշեալ ընկերութիւնը, դեռ պատերազմը չը սկսված, նախաձեռնութիւն էր ստանձնել մշակելու այն ծրագիրները, որոնք վերջը իրագործվեցին եւ մեծ կորուստներ պատճառեցին ու մեծ վնասներ անգլիական օֆիցէրներին։ Մի եւ նոյն ժամանակ նա հարցնելու է, արդեօք դրամական տուգանքներով թէ ուրիշ պատիժներով է հատուցում լինելու՝ մասնաւոր ընկերութեան այդ տեսակ պատերազմական գործողութիւնների համար, եւ արդեօք որ եւ է բողոքներ չեն ծագել այդ նոյն ընկերութեան առիթով որ եւ է օտարազգի պետութեան կողմից։

ՊՐԷՏՕՐԻԱ։ Ինչպէս հաղորդում է Կիտչենէր, գնդապետ Գրէմֆէլ յունիսի 18-ին Գոպբէլի մօտ գերի վերցրեց 93 բօէր Բէյէրի զօրաբաժնից եւ աւար առաւ 56 սայլ, հարիւր հրացան եւ մեծ քանակութեամբ ռազմամթերք։ Բօէրներից սպանվեց մէկը։ Անգլիացիները ոչ մի կորուստ չունեցան։

ՊԱՐԻԶ։ Պարլամենտը առաւօտեան նիստում ընդունեց՝ ուղղակի հարկերին վերաբերեալ օրինագիծը։

ԼՕՆԴՕՆ։ Կիտչենէր հաղորդում է Պրէտորիայից, թէ երէկ Պիտէրսբուրգից եկող գնացքը օդը պայթեցրվեց Վաբօյապրուստից 5 մղոն դէպի հիւսիսակողմը։ Սպանվեցին՝ մի օֆիցէր, 11 զինուոր, գնացքի մեքենավարը, հնոցապանը, կոնդուկտորը եւ չորս բնիկներ։ Այդ առաջին այդ տեսակ դէպքն է հիւսիսային գծի վրա։

ՈՒԻՆ։ Հունձի վրա եղած յոյսերը վատացան. վատ են ժանաւանդ խոտերը. գարնանացանից յոյս ունեն ստանալ միջակ հունձի կէսից ոչ աւելի, իսկ աշնանացանից՝ ոչ աւելի, քան երեք քառորդը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՎ։ Երէկվանից առեւտրական բանկը փակված է. դռան վրա յայտարարութիւն է կախված, թէ, Խարկովի առեւտրական բանկի առիթով տիրած սարսափի շնորհիւ եւ յունիսի 12-ի հրդեհից առաջացած վնասների պատճառով, գանձարանը սպառվել է եւ բանկը դադարեցնում է գործողութիւնները մինչեւ նիւթական միջոցների վերականգնումը։ Քաղաքում ահագին իրարանցումն է ընկել։ Բանկում փող ունեցողները խռնվում են փակ դռան առաջ։

ՐԻԳԱ։ Ռիգա քաղաքի հիմնադրութեան եօթհարիւրամեակի առիթով այսօր հանդիսաւոր ժամասացութիւն կատարվեց ուղղափառ տաճարում եւ բոլոր լիւթէրական եկեղեցիներում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Օրէնսդրութիւնների ժողովածուի» մէջ հրատարակված է թութունի ակցիզը վերցնելու ձեւի փոփոխութեան մասին։

ՐԻԲԻՆՍԿ։ Արտակարգ գնացքով ժամանեց ներքին գործերի մինիստրը եւ գիշերը ուղեւորվեց Եարօսլավեան նահանգի Ռոմանով քաղաքը։

23 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլաեվնայի ծննդեան բերկրալից դէպքի առիթով ստացվել են թէ անմիջապէս Բարձրագոյն Անունով եւ թէ Կայսերական պալատի եւ ներքին գործերի մինիստրների միջոցով՝ կայսրութեան զանազան դասակարգերից, հիմնարկութիւններից եւ ընկերութիւններից ամենահպատակային շնորհաւորութիւններ Թագաւոր Կայսրին եւ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնային՝ հաւատարմահպատակային անձնուիրութեան հաւաստումներով հանդերձ։ Երբ այդ մասին Նորին Կայսերական Մեծութեան ներքին գործերի մինիստրը զեկուցեց ի Բարձրագոյն տեղեկութիւն, Թագաւոր Կայսրը ամենաողորմածաբար բարեհաճեց կայսրութեան բոլոր դասակարգերին, հիմնարկութիւններին եւ ընկերութիւններին շնորհակալութիւն յայտնել նրանց արած շնորհաւորութիւնների համար։

Գերմանական կայսերական այն օրէնքով, որ վերաբերում է բանուորների ապահովացման՝ նրանց աշխատանքի անընդունակ դառնալու դէպքում, որոշված էր, որ ռուս բանուորները (սեզօնային) պէտք է նոյնպէս վճարեն ապահովագրութեան պրէմիա, չը նայելով, որ նրանք Գերմանիա են անցնում միմիայն ժամանակաւորապէս գիւղատնտեսական աշխատանքներ կատարելու համար։ Ի փոփոխութիւն այդ օրէնքի, ներկայ տարվայ մարտի 7-ին հրատարակվեց գերմանական դաշնակցական խորհրդի հետեւեալ որոշումը։ «Ռուսահպատակ եւ աւստրիահպատակ լեհացի բանուորներից նրանք, որոնց՝ պատշաճաւոր իշխանութիւնները թոյլ են տալիս ապրել Գերմանիայում որոշեալ ժամանակամիջոցի ընթացքում եւ որոնք պարտաւոր են այդ ժամանակամիջոցը լրանալուց յետոյ վերադառնալ արտասահման, չեն ենթարկվում՝ աշխատանքի անընդունակ դառնալու դէպքի համար ապահովագրութեան օրէնքի համաձայն իրանց ապահովագրելու պարտականութեան, եթէ նրանք բանուոր են վարձվում գիւղատնտեսական կամ անտառային կամ դրանց օժանդակիչ արդիւնաբերութիւնների աշխատանքների համար»։

Յունիսի 26-ին Պետերբուրգից ճանապարհ ընկաւ մամուլի գործերի գլխաւոր վարչութեան պետ իշխան Շախովսկոյ, որ այցելելու է Եարօսլավլ, Նիժնիյ-Նովգորոդ, Կազան, Սամարա, Սարատով, Ցարիցին եւ Ռոստով Դոնի վրա քաղաքները, որպէս զի անմիջապէս ծանօթանայ տեղական ցէնզուրական հաստատութիւնների հետ։

«Правительственный Вѣстникъ»-ում տպված է. «Ներկայ թուի մայիս ամսին, Բարձրագոյն բարեհաճութեամբ, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կից, մինիստր գեներալ-ադիւտանտ Վանովսկու նախագահութեամբ մի առանձին յանձնաժողով կազմվեց միջնակարգ դպրոցի բարեփոխութեան համար։ Սկսելով իր գործունէութիւնը մայիսի 28-ին, յանձնաժողովը այժմ վերջացրել է հիմնական սկզբունքների մշակումը նոր հանրակրթական միջնակարգ դպրոցի համար, կազմել է դասացուցակները եւ ուսումնական ծրագրի կօնսպէկտը եւ մի եւ նոյն ժամանակ քննել է այն հարցը, թէ ինչ ձեւով պէտք է դասաւանդման նոր ծրագիրները մտցնել գոյութիւն ունեցող արական գիմնազիաներում, պրոգիմնազիաներում եւ ռէալական դպրոցներում։ Այնուհետեւ, ի նկատի ունենալով, որ ուսումնական գործի շահերի տեսակէտից անհրաժեշտ է որքան կարելի է շուտ վերակազմել միջնակարգ դպրոցը, յանձնաժողովը մշակել է մանրամասն ծրագիր, որի հիման վրա արական միջնակարգ դպրոցների լիակատար վերակազմութիւնը պէտք է աւարտվի 1905 թուին։ Յանձնաժողովի ենթադրածով, կառավարչական միջնակարգ դպրոցը պէտք է լինի միատեսակ, բոլորը մի տիպի, եօթնամեայ դասընթացքով, առանց յունարէն լեզուի, լատիներէնը թողած միայն բարձրագոյն չորս դասարաններում եւ այն պայմանով, որ այդ լեզուն ուսումնասիրել չը ցանկացողները կարող են նրա փոխարէն անցնել լրացուցիչ դասընթացք բնական գիտութիւններից եւ գծագրական արուեստներից։ Ընդհանուր տիպի միջնակարգ դպրոցում վերացրած յունարէնի եւ կրճատված լատիներէնի տեղ մտցնվում է բնական գիտութիւնների, օրէնսգիտութեան, երկու նոր լեզուների ու հայրենագիտութեան ուսուցումն եւ ոյժ է տրվում ռուսաց եւ ընդհանուր գրականութեան, պատմութեան եւ մաթեմատիկայի ուսուցման։ Հիմնական սկզբունքներում ցոյց է տրված, թէ ինչ ձեւով եւ ինչ պայմաններով են ընդունվելու համալսարան եւ ուրիշ բարձրագոյն դպրոցներ այն անձինք, որոնք աւարտելու են միջնակարգ դպրոցը լատիներէնով եւ առանց նրան։ Այնուհետեւ նոյն սկզբունքներում—1) ցոյց է տրված, թէ ինչ կերպ են թոյլ տրվելու չեղումներ այդ ընդհանուր տիպից այն դպրոցների համար, որոնք պահպանվելու են քաղաքների, զեմստվոների, ընկերութիւնների, դասակարգերի եւ մասնաւոր անձանց միջոցներով կամ նպաստներով, եւ 2) մշակված է ծրագիր միջնակարգ կլասիկական դպրոցի համար, ուր պարտադիր կը լինեն յունարէն եւ լատիներէն լեզուները, եւ յայտնված է յանձնաժողովի կարծիքը, որ այդպիսի դպրոցներ պէտք է թողնել բոլոր համալսարանական քաղաքներում եւ Վիլնօ քաղաքում։ Յանձնաժողովի աշխատանքների վերոյիշեալ արդիւնքները ենթարկվեցին Բարձրագոյն բարեհայեցողութեան եւ Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց լիովին հաւանութիւն տալ յանձնաժողովի յայտնած կարծիքներին, թէ անհրա-

ժեշտ է առանձին ուշադրութիւն դարձնել ուսանող մատաղ սերունդի դաստիարակութեան եւ այն բանի վրա, որ նա սովորի դպրոցական կարգապահութեան, ոյժ տալ մարմնամարզութեան, զինուորական եւ ֆիզիկական վարժութիւնների ուսուցման, մտցնել շարժական խաղեր, դպրոցական զբօսանքներ ու ճանապարհորդութիւններ, իսկ որտեղ հնարաւոր կը լինի՝ նաեւ ձեռքի աշխատանք։ Մի եւ նոյն ժամանակ Թագաւոր Կայսրը բարեհաճեց հաւանութիւն տալ գեներալ-ադիւտանտ Վանովսկու կարծիքին, թէ վերոյիշեալ կլասիկական գիմնազիաները պէտք է պահել միմիայն հետեւեալ հինգ քաղաքներում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Կիեւում, Վարշավայում եւ Իւրիեւում, ամեն մէկում մի-մի հատ։ Այնուհետեւ, Նորին Կայսերական Մեծութեան բարեհաճութեամբ, յանձնաժողովի վերոյիշեալ կարծիքները, ուսումնարանական շրջանների հոգաբարձուների միջոցով, յանձնվելու են մի քանի միջնակարգ դպրոցների մանկավարժական խորհուրդների եւ հոգաբարձական խորհուրդների քննութեան եւ սրբազան սինոդի օբէր-պրոկուրորի, Ս. Պետերբուրգի եւ Լադոգայի միտրոպոլիտի եւ այն մինիստրների եղրակացութեան, որոնց իրաւասութեան տակ կան միջնակարգ դպրոցներ։ Այդ բոլոր անձանց եւ հաստատութիւնների եղրակացութիւնները առաջիկայ ձմեռային ամիսների ընթացքում կենթարկվեն ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան քննութեան եւ այնուհետեւ գործին ընթացք կը տրվի այն կարգով, որ որոշված է յանձնաժողովի մշակած ծրագրով։ Միջնակարգ դպրոցների այդ ծրագրված աստիճանական վերակազմութիւնը սկսվելու է ստորին դասարաններից։ Դասաւանդման փոփոխութիւնը պէտք է ամենից առաջ մտցնվի հին լեզուների մէջ այն հիման վրա, որ այդ լեզուներից մէկը, յունարէնը, բոլորովին դուրս է գցվում ապագայ ընդհանուր տիպի միջնակարգ դպրոցի պարտադիր առարկաների մէջից, իսկ միւսի, լատիներէնի, վրա այժմ այնքան չափազանց շատ ժամեր (43) են գործ դրվում, որ շատ ցանկալի է նրանց անյապաղ կրճատումը, որպէս զի ազատ ժամանակ մնայ այժ տալու հաւասար մի քանի ուրիշ առարկաների դասաւանդման, որի անհրաժեշտութիւնը զգում են ամենքը։ Նկատի առնելով դպրոցների համար այժմեան անցողական ժամանակում ուսումնարան մտնողների եւ արդէն եղած աշակերտների շահերը եւ ուզելով խուսափել դպրոցական կազմակերպութիւնը յանկարծ տակն ու վրա անելուց, յանձնաժողովը իր կողմից վերին աստիճանի ցանկալի եւ մանկավարժական տեսակէտից չափից վեր օգտակար է գտել՝ առաջիկայ բարեփոխութեան համար անհրաժեշտ նախապատրաստական ձեռնարկութիւններից մի քանիսը սկսել հէնց եկող 1901—1902 ուսումնական տարվանից, այն է՝ պէտք է գիմնազիաներում եւ պրոգիմնազիաներում վերացնել լատիներէնը առաջին երկու դասարաններում եւ յունարէնը՝ 3-րդ եւ 4-րդ դասարաններում, իսկ նրանց փոխարէն ոյժ տալով ռուսերէնին ու աշխարհագրութեան, եւ մտցնել առաջին դասարանում պատմութիւն եւ մի նոր լեզու, իսկ որտեղ տեղական պայմանները թոյլ տան՝ նաեւ բնական գիտութիւններ, նոյնպէս առաջին դասարանից։ Բէալական դպրոցների վերաբերմամբ փոփոխութիւններ մտցնել առաջին երկու դասարանների դասերի բաժանման մէջ. նոյնպիսի փոփոխութիւններ անել առաջիկայ 1901—1902 ուսումնական տարվայ սկզբից նաեւ այն գիմնազիաներում, ուր միտք կայ պահել հին լեզուները։ Մի եւ նոյն ժամանակ Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց ժողովրդական լուսաւորութեան մինիստրի ամենահպատակային զեկուցման վրա, յունիսի 11-ից, սեփական ձեռքով գրել. «Ցոյս ունեմ, որ նոյնպէս լուրջ ուշադրութիւն կը դարձնվի նաեւ մեր մատաղ սերնդի կրօնա-բարոյական կրթութեան վրա»։

ՏԻՄԷՆ։ Շոգ է. չուաքում 340 ռէօմիւրի ջերմաչափով։ Հացահատիկների եւ խոտի հունձը վատ է։ Այսօր յորդ անձրեւ եկաւ։

ԱՍՏՐԱԽԱՆ։ Վեազովկա գիւղում երէկ այրվեցին 280 տներ։

ՊԱՐԻԶ։ Սենատ։ Շոմլի հարցնում է Ֆրանսիայի եւ Մարոկկոի մէջ այժմ եղած յարաբերութիւնների դրութեան մասին։ Դելկասէ պատասխանում է, թէ Մարոկկոի դեսպանութեան ներկայութիւնը Պարիզում վկայում է այն սրտագին զգացմունքների մասին, որոնք միացնում են երկու պետութիւնները։ «Երբ,—շարունակում է մինիստրը,—դէպքերը հարկադրեցին մեզ գրաւել հարաւ-արեւելեան ովազիսը, մենք հանդիսաւոր կերպով յայտարարեցինք, թէ ուզում ենք կատարեալ տէրեր լինել անգլիական երկաթուղուց արեւելեան կողմերում, բայց այդ սահմաններից դուրս ոչինչ չենք ձեռնարկի։ Մենք պահեցինք մեր խոստումը եւ հաւատարիմ ենք մնում նրան։ Ոչ ոք աշխարհում, ի նկատ առնելով մեր վարմունքը, չի ունենայ իրաւունք կասկածելու այդ մասին (ծափահարութիւններ)։ Մենք սահմանափակվում էինք նրանով, որ յետ էինք մղում արշաւանքները, հասցնելով չափաւորութիւնը եւ օրինականութիւնը մեծագոյն ծայրայեղութեան, բայց Մարոկկոի կառավարութիւնը մեր կողմից նախազգուշացում ստացաւ, թէ մենք դիտում ենք Ալժիրի սահմանակից տեղերում ապրող ցեղերին։ Ցեղոյ տեղի ունեցաւ սպանութիւնը Ռիֆֆի ափում։ Մենք հարկաւոր բաւարարութիւն ստացանք եւ այժմ ամեն ինչ վերջացած է։ Մարոկկոն գիտէ, որ մենք մտադիր ենք նրա հողերի անբաժանելիութիւնը յարգել, իսկ Մարոկկոի դեսպանութեան բարեկամական հաւաստիացումներին մենք պատասխանեցինք սրտագին բարեհաճութեամբ» (Տաք ծափահարութիւններ)։ Հարցը սպառված է։

ԿԱՍԷԼ։ Կոնկուրս է նշանակված մրուրի չորացման ընկերութեան վերահսկիչ խորհրդի ձերբակալված նախագահ Զաուսպֆի մասնաւոր գոյքի վրա։

ԼՕՆԴՕՆ։ Հարաւային Աֆրիկայում եղած կորուստների պաշտօնական ցուցակով, յունիս ամսին սպանվել են 15 օֆիցէր եւ 152 զինուոր, վիրաւորվել են, ի բաց առած գերի ընկած վիրաւորներին, 42 օֆիցէր եւ 444 զինուոր, վէրքերից մեռել են 6 օֆիցէր ու 60 զինուոր եւ անհետացել են ու գերի ընկել 3 օֆիցէր ու 75 զինուոր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ 22 յունիսի։ Բօրսա։ Ա. Ի. Մանթաշեան եւ ընկ. Նաւթարդիւնաբերական եւ առեւտրական ընկերութեան ակցիաներով եղել են 233 մանր առուծախներ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Այսու յարգոյաբար հրաւիրվում է Թիֆլիսի Վանքի աւագ եկեղեցու միաբան տէր Եղնիկ աւագ քահանայ Երզնկեանցի ծխական ժողովուրդը յիշեալ եկեղեցին, ամսիս 24-ին, առաջիկայ կիրակի օրը, 12 ժամին, գաղտնի քուէարկութեամբ ընտրելու Սուրէն Երզնկեանցին՝ յիշեալ եկեղեցուն սպասաւորելու համար։

Գործակալ ա. մ. եկ. հայոց Թիֆլիսի
2—2 Զաքարիա քահ. Զարդեղեանց

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ նրա ատեանում ներկայ յունիսի 27-ին, ցերեկվայ 1 ժամին, աճուրդ է նշանակված Օրլովկայա փողոցը կանոնաւորելու եւ սալայատակելու, նոյնպէս այդ փողոցով յենապատ կառուցանելու համար, 3255 ր. 35 կ. գումարի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանները Վարչութեան III շինարարական բաժնում բոլոր լի օրերը, ցերեկվայ 9-ից մինչեւ 2 ժամը։
2—3

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
КАКАО
ЖУ
ФАБР.
С. С. ЖУКОВЪ
МОСКВА.

ՈՒՐԱՆԻԱ

Աստղաբաշխական վէպ
Ֆրանսերէնից թարգմ. Հ. Առաքելեան
Գինն է 1 ր. 50 կ.

Դիմել՝ Книжный магазинъ Гуттенбергъ. Лорисъ Меликовская, № 11, Г. Галустяну.
Նոյն տեղը վաճառվում են նոր լոյս տեսած եւ այլ ամեն տեսակ գրքեր։
4—5

Ախալքալաքի գաւառի Գոմ գիւղում բնակվող Յարութիւն Տէր-Սիմէօնեան Սարգսեանց սրանով յայտնում է, որ ցանկանում է

ՏԻՐԱՑՈՒԱԿԱՆ ՊԱՇՏՕՆՈՎ

ծառայել Թիֆլիսի եկեղեցիներից մէկում։ Հրմուա է նոր հայկական ձայնագրութեան եւ հին հայկական եկեղեցական բոլոր արարողութիւններին— շարականներին. ունի աջող ձայն։ Համաձայն է գնալ եւ. որ եւ է ուրիշ քաղաք։

Հասցէն՝ Բէթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու սենեակներում մինչեւ յունիսի վերջը, այնուհետեւ Ախալքալաք՝ Գէորգ Կիրակոսեանին։
2—3

ԱՄԵՆԱՑԱՑՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՑԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ԳԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԳԻԹԱՌՆԵՐ, ՖԼԷՑՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՑՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՑԼՆ, ԵՒ ԱՑԼՆ։



Բոլոր տեսակ գործիքների համար գին կարելի է վճարել մաս-մաս։
ԳՐԷՑՍԿՈՒՐԱՆՏՆ
ուղարկվում է ձրի։
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՑՆԱԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԴԷՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան
Музыкалное депо Б. М. Мириманіана,
ТИФЛИСЪ.
Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
(կիր.)

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ դասընթացքի XII շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան»
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, ելաշխատելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա.) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերօսինի գործարանական հաշուեհատուածներ։
Բ.) Առևտրական թուաբանութիւն։
Գ.) Առևտրական նամակագրութիւն։
Դ.) Առևտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։
Ե.) Գեղագրութիւն և ամենավայր ձեռքերի ուղղելը։
Պարապմունքները սկսվելու են 1901 թ. սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ։
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՐՈՒԲԼԻ
Ցանկացողները թող դիմեն դրատ կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մոտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գտնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պոստի ծախս վճարելու։
(կ.) 1—25

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
վաճառվում է
ԱՏԱՄՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ
Աչխատ. դոկտոր Մ. Իւթիւճեանի
ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.
Նոյն տեղից կարելի է ձեռք բերել նոր լոյս տեսած եւ այլ ամեն տեսակ գրքեր։ Գումարով գնողներին զիջումով։
Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Лорисъ-Меликовская улица, № 11), Г. Галустяну.
3—5

Կօնֆէկտի եւ շօկօլադի գործարան
„Փ. Ն. ՓՐԻԳՕՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են շաքարեղէնների ամեն տեսակ արտադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ։
Պատրաստում ենք՝ կարամել մրգեղէնից (фруктовая карамель), կարամել լցված (съ начинкою), մարմէլադ (пастила), զէֆիր (зефиръ), դրաժէ (драже), քիրվա-շաքար (պաղ-շաքար, леденецъ)։
Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հսկողութեան տակ։
Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշդութեամբ։
Պրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի։
Պատուէրների համար դիմել՝ Тифлисъ, Нахаловка, Павловская улица, собственный домъ, № 12.
Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիններում—Գ. Բայեանդուբեանի, Գ. Ս. Տէր-Սիմօնեանի, Զ. Ի. Սուլթանեանի, Զ. Գ. Պօպովի, Եղբ. Ս. Ի. Մ. Աբրահամովների, Հաջի-Ռահմանովի պարսկական մագազինում, Պետրոսի իտալական մագազինում եւ այլն։ Տելեֆոն № 362։
40—100

Дозволено цензурою, Тифлисъ, 23 Іюня 1901 г.
Электропечатня Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 72.